

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Մարտին Սարգսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-313-13.08.2013-ՏՀ-010/0*) վերաբերյալ:

Համաձայն ներկայացված հիմնավորման՝ օրենքի նախագծով նախատեսվում է, որ ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպությունները համարվեն ավելացված արժեքի հարկ վճարող՝ ոչ միայն օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառությունն ավելացված արժեքի հարկի շեմը գերազանցելու պահից, այլ նաև՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության հիման վրա՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարությունում նշած տարվա ավարտը:

Նպատակադրումը հասկանալի և ընդունելի է, սակայն նախագիծն ամբողջությամբ չի կարգավորում խնդիրը, քանի որ ներկայացված խմբագրությամբ նախագծի ընդունման դեպքում ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպությունները կհանդիսանան ավելացված արժեքի հարկ վճարող՝ անկախ դիմում ներկայացնելու և շեմը գերազանցելու հանգամանքից, մինչդեռ օրենքի նախագծի հիմնավորման համաձայն օրենքի նախագծի նպատակը դիմում ներկայացնելու հնարավորության ընձեռումն է:

Խնդրի համապարփակ լուծման նպատակով անհրաժեշտ է ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու հնարավորություն սահմանել նաև ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպությունների համար: Նման հնարավորություն ներկայումս վերապահված է միայն այն անձանց, որոնք կարող են համարվել շրջանառության հարկ վճարող, իսկ ոչ առևտրային կազմակերպություններն այդպիսիք չեն կարող համարվել, քանի որ շրջանառության հարկ վճարողներ են հանդիսանում առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ օրենքի նախագիծը լրամշակման կարիք ունի և պատրաստակամ է մասնակցելու նախագծի լրամշակման աշխատանքներին՝ բարձրացված խնդիրը կարգավորելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը:

Օրենքի նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՎԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
վերաբերյալ**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**<<Ավելացված արժեքի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետու-
թյան օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հան-
րապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում
կարգավորման**

1. <<Ավելացված արժեքի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետու-
թյան օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետու-
թյան օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման արդյունքում
մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական
աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ
չեն առաջանա:

2. Նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա
բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող
իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող
հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական
վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպություններին ևս համարել ԱԱՀ վճարող:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման
ազդեցության գնահատման**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագիծը *վերաբերում է ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպություններին ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնելու հնարավորություն ընձեռելուն* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվում**:

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

**«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության
ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **չեզոք ազդեցություն**:

Եզրակացություն

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպությունները ավելացված արժեքի հարկ վճարող են համարվում ոչ միայն օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառությունը ավելացված արժեքի հարկի շեմը գերազանցելու պահից, այլ նաև ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության հիման վրա՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարությունում նշած տարվա ավարտը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունումը պետական բյուջեի ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Միաժամանակ, նախագծի ընդունման արդյունքում տեղի կունենա պետական բյուջեի եկամուտների փոփոխություն, սակայն, վերջինիս վերաբերյալ կոնկրետ գնահատական հնարավոր է ներկայացնել միայն ավելացված արժեքի հարկով հարկման համակարգին անցնել ցանկացող պետական ոչ առևտրային կազմակերպությունների քանակի, ինչպես նաև դրանց գործունեությանն առնչվող համապատասխան ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ տվյալների առկայության պարագայում:

Պ-313-13.08.2013-S<-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**ՕՐԵՆՔԸ****«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1) կետից հանել՝

1.«ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպությունների եւ» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ****Ընթացիկ իրավիճակը եւ առկա խնդիրները .**

Ներկայումս «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքը ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպություններին հնարավորություն չի տալիս օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված կարգով իր հաշվառման վայրի հարկային մարմնին վերադաս հարկային մարմնի սահմանած ձեռով գրավոր հայտարարություն ներկայացնել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ: Արդյունքում՝ այն ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են համաձայն՝ ՀՀ կառավարության որոշումների կամ իրենց գործունեությամբ պայմանավորված այլ հիմնավորված պատճառների, սահմանափակված են իրենց գործունեությունը կազմակերպել այնպես, որ մի կողմից չխախտեն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը, մյուս կողմից անհարկի անհարմարություն չառաջացնեն գործարար միջավայրին ծառայություններ մատուցելիս: Մասնավորապես՝ գործող օրենսդրության կիրառմամբ ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպությունները, մինչև ԱԱՀ օրենքով սահմանված շեմը գերազանցելու պահը, ծառայություններ մատուցելիս (աշխատանքներ կատարելիս) գանձում են գումար առանց ԱԱՀ-ի: Մինչդեռ այն դեպքում, երբ ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպությունները իրենց գործունեությունը իրականացնում են կառավարության որոշումների կամ այլ իրավական ակտերի համաձայն, որոնցում սահմանված գումարը ներառում է նաեւ ԱԱՀ, ապա այդ դեպքում էլ խախտվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերը, որն էլ իր հերթին անհարկի անհարմարություն է առաջացնում հատկապես գործարարների համար:

Առաջարկվող լուծումները.

Առաջարկվում է փոփոխություն կատարել «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածում՝ հնարավորություն տալով ձեռնարկատիրական

գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առետրային կազմակերպություններին «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով եւս համարվելու ԱԱՀ վճարող:

Ակնկալվող արդյունքները.

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունը ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առետրային կազմակերպություններին, «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված իրավունքից օգտվելու արգելքի վերացմամբ, հնարավորություն է տալիս իր հաշվառման վայրի հարկային մարմնին վերադաս հարկային մարմնի սահմանած ձեռով գրավոր հայտարարություն ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ: